

Վէր, վեր, միշտ վեր, ո՛վ հոգիս, կ'ըզձամ որ զանկըս հըպի
Երկնի կապոյտ անդորրին անմարդկային օրհնութեան,
Տեսնել կ'ուզեմ, ո՛վ հոգիս, Խաչեալին զահն հոլանի
Ոսկեղրուագ ամպերու զագաթնակէտ բարձրութեան:

Վէր, ու լոյսն այս մեղամաղձ նայուածքներո՛ւս քերթողի
Թող իր ծոցին մէջ ըզգայ շառայլն երկնի՛ն բոցերուն...
Թող տըրտիւնը սրտիս՝ որ խենդութեամբ է մոլի՝
Լեցուի զարձեալ անդորրովն երկնահոլո՛ւ վայրերուն:

Տա՛նկ, տանկ, կոչնակն իրիկուան հովիտներուն մէջ ինկած
Կը շրջի գերդ ալիքին կանաչ երիզն այգին տակ...
Ու գիւղական բարութեան եղբայրութիւնն օրհնւած
Կը դիմէ ծանրը քայլով դէպ ի տաճարն անպարփակ:

Տա՛նկ, տանկ, ինչպէս Լըոութիւնն թեթեւսոյլ զընացքով
Ըստուերներուն հետ նրբին կը գրկէ կո՛ւրծքը ժամուն...
Ու գերդ ոգի մ'երկնային խաչերուն շուրջ անվրդով
Կը հիւսէ գովքը խոհին որ իր ծընունդն է ոսկուն:

Պատէր, անձայն գիւղերու տաճարներո՛ւն անսովոր,
Ձեր շուքին տակ ի՛նչ հեշտ է ըզգալ եռալն հաւատքիս...
Ձեր մամռապատ վերելքին զեփիւտին թեւն եմ ոլոր,
Ու ձեր ծոցին մէջ հնչող զանգին զարկէրն է հոգիս...:

Պատեր անո՛յշ քաղցրութեան, երանութեան և յոյսի...
Ձեր մեկուսի սրբութեան խոնարհութիւնն երկնային
Ունի թովչանքն հեշտալի յիշատակի մը բարի,
Որուն հոգին կը մըսի շիրմաքարի մը խորքին...:

Պատեր անխօս, ուր Աստուած դըրած է հետքն իր մատին,
Ուր առաջին հունչն ամբիժ աղօթքներուն կը դառնայ
Բեհեզազարդ և չքնաղ ըզգայնութեան մը թափին,
Որ կը զգուէ խիղճն արդար հեզ հիւղերուն մօտակայ:

Պատեր, լոյսի և զրծի, գով ըստուերի կամ մութի
Երանգերովն յօրինուած աղօթատան սո՛ւրբ պատեր...
Թողէ՛ք որ Օրն ամփոփուի զերդ ջինջ խոկում մը կոյսի
Ձեր տողանցքին դէմ խորհող սիւններուն շուրջ ապալեր:

Ու դուն, կոչնակ մեղանոյշ, ու դուն Խաչեալը հըզօր,
Ծորեցէ՛ք լոյս այս խաւար երկրագունտի երակին...
Կեանք ծորէ մեզ, ո՛վ Յիսուս, զի անդունդներն են ոլոր,
Որոնց եզրին է կանգնած Մահկանացուն թախծագին:

Լոյս, լոյս, ո՛վ Տէր, ո՛վ Յիսուս, ո՛վ յաղթութեան դուն Ոգի,
Լոյս մեր հիւանդ մտքերուն տառապանքին անկայուն...
Լոյս մեր ճամբուն, ուրկէ յար կ'անցնի Գիշերն ահալի,
Մտրակելով որ ծագին լուսնակն և հոյլն աստղերուն:

Ու գիշերին մէջ անձայն, և կամ շողին տակ Այգին,
Պիտի երգենք քու փառքին արշալոյսներն, ո՛վ Յիսուս...
Եւ այս քընարօ որուն մէջ դեռ կայ մասնիկն աւիւնին
Պիտ՝ որոնէ քու ճամբով ակն ամպամած յոյսերուս:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

ԶԱՐԶԱՐԱՆԱՑ

ՆՇԽԱՐՆԵՐ

ՀԱՅՈՅ ՔՈՎ

Հիւ ու նոր օրինաց մէջ մեծ եղեր
է միշտ սրբոց նշխարաց մատուցուած
մեծարանքը, զոր հանդիսիս մէջ ընդար-
ձակօրէն ցուցած եմ երբեմն¹: Այ՛ո՛,
նաեւ քրիստոնէութեան մէջ, և նոյն-
ինքն Յիսուսի և առաքելոց օրերէն,
ուր տեղատես կ'ինը Գրիստոսի քղանցէն
ընդունեցաւ իւր առողջութիւնը. և Պօ-
ղոսի քրտունքը սրբող թաշկինակներ
ու վարչամակներ հիւանդաց կը տար-
ուէին. և Աստուած, որ ինքն էր նըշ-
խարաց զօրութիւն տուողը, անոնցմով
կը բժշկէր իւր հաւատացեալքը²: Դարեր
վերջ պիտի ելնէին անուանեալ քրիս-
տոնեայք, որ ի փառս Աստուծոյ պիտի
սրբազրէին Աստուծոյ գործը, ծառա-
նալով նշխարաց յարգութեան դէմ:
Ազոնց չէ որ կը խօսիմ ես հօս, այլ
ճշմարիտ հաւատացելոց:

Եթէ առաքելոց կամ սրբոց մասունք
այդչափ արգոյ էին, դիւրին է երեւակա-
յել՝ թէ ո՛րքան մեծ պիտի լինէր պատիւը
տէրունական նշխարաց, որոնք մարդկա-
յին ազգի փրկութեան գործիներն հանդի-
սացան: Բազմաթիւ են անոնց յիշատակ-
ները՝ ցրուած տիեզերական եկեղեցոյ
պատմութեան մէջ: Մեր ազգն ալ չէր
կարող բնականապէս անտարբեր մնալ
անոնց հանդէպ, և չի՛նդրել ու չյարգել
զանոնք երբ և ինչպէս որ հնարաւոր էր:
Եւ պիտի թուեմ հօս այն նշխարները,
որոց յիշատակութեան հանդիպած եմ մեր
անցելոյն մէջ:

1. ԽԱՅԸ, մեծագոյնը նշխարաց մէջ,
Յիսուսի զոհին սեղանը, անբաւ սիրոյն
հշաղ, և վերջին զալստեան փառաւոր



(Սևտ. Երուս. 1246)

կարապետը³, որ հեթանոսաց առաքելոյն
միակ պարծանքը կը կազմէր⁴, տուած է
մեր աշխարհին հետեւեալ մասունքը:

ա. Գիւտայ խաչ. — Հնագոյն է յիշա-
տակութեամբ Ուտի զաւառի Գիւ գիւղին
մէջ մեծարուածը, որոյ տեղեկատուն է
Մովսէս Կաղանկատուացի է զարուհ: Կը
պատմէ նա՝ թէ յետ ս. Գրիգորիսի քա-
րոզութեան զրացի Աղուանից աշխարհին
մէջ, նոյն երկիրը վերստին դիցապաշտու-
թեան կը դառնայ: Ս. Մեսրոպ իւր ա-
ռաքելութեան շրջանին ուխտի կ'երթայ
յերուսաղէմ աշակերտօք և կը դառնայ,
հետը բերելով ոսկեզօծ արծաթեայ խաչ

1. Բազմ. 1906, 543. — 2. Գործք առաք. ԺԹ, 12.
3. Մատթ. ԻԴ, 30. — 4. Գղտ. 9, 14.

Խաւարածոր կոչուած վանքը: Յետ ժա-
մանակի՝ տեղւոյն Ատոմ վանահայրը նեղ-
ուած Արաբաց հարստահարութենէն, կ'եր-
թայ բնակիլ Շիրակայ մէջ Հոռոմոսի
ուխտը, միասին տանելով խաչը: Ախու-
րեան գետը՝ որ մենաստանին շուրջ կը
դառնար, ամրան արեւուն տապէն շոգիա-
նալով՝ շատ նեղութիւն կը հասցնէր վա-
նականաց, ապականելով օդը: Որոյ ի
դարման՝ հայր Ատոմ կ'առնու խաչը,
կ'ենէ վանուց քով բարձր տեղ մը, կ'ա-
ղօթէ, կը բարձրացնէ խաչը մօտակայ
լեռան մը դէմ. և իւր փափաքին համե-
մատ՝ այն լեռն որոտմամբ կը ճեղքուի,
և գետն ընթացքը կը փոխէ անոր մէջ:
Ապա Ատոմ վերստին կը տանի խաչն ի
Խաւարածոր, որ յետոյ գիւղ կը դառնայ.
և պատմչիդ օրով «կայ գետարգել սուրբ
նշանն ի Զագաւանս» կոտայից. իւր վը-
կայածներէն միակ մասը՝ զոր կրնանք իբր
պատմական ընդունիլ: Իսկ ԺԳ դարուն կը
գտնուէր կաղզվանայ ուխտին մէջ. և
1387ին երբ Լենկթիմուր կ'արշաւէր ի
Հայս, նոյն մենաստանէն երկու կրօնա-
ւորք կը ծածկին զայն զաղտնի տեղ մը,
և իրենք կը սպանուին. որով խաչն ան-
գտանելի կը դառնայ ի մեծ սուգ Հայոց,
կ'ըսէ Մեծօփեցին, վերոյիշեալ տեղւոյն
մէջ:

դ. Միծառնկայ խաչ. — Հերակղ երբ
աստուածեան խաչով կը դառնար ի Պար-
սից, կանգ կ'առնու Երեզն աւանի մէջ.
ուր սպասաւորն (հայ թէ յոյն՝ յայտնի
չէ) գիշերը կը կտրէ խաչէն մաս մը, և
կը փորձէ փախչիլ: Կ'իմանայ կայսրը,
կ'առնու նշխարը, և կը գլխատէ գողը:
Հասնելով ի կեսարիա՝ նոյն մասը կը
նուիրէ քաղաքին Յովհանն հայրապետին:
Նոյն տարին Վահան կամսարական կ'եր-
թայ ի կեսարիա, 36000 դահեկանով կը
գնէ զայն հայրապետէն, և կը բերէ կը
յանձնէ Գլակայ Ս. կարապետին, ուր կը
մնայ վեց տարի: Արջուց իշխանը Գորգ
681ին ի Տարօն կու գայ, Միծառնիկ ա-
նուն մարդու մը 6000 դրամ կը խոս-
տանայ՝ գողնալու համար խաչը: Նա կը

հրաժարի դրամէն՝ ուրիշ պայմանաւ մը.
գողնալ խաչը, փախչիլ նոյն իշխանին
գաւառը, և հօն շինել իւր անուամբ աւան
մը: Այդպէս ալ կը լինի. Եկեղեցականէն՝
որ իւր ազգականն էր, կ'առնու խաչը,
կը փախչի և կը շինէ Միծառն աւանը,
եկեղեցի մ'ալ, և անոր մէջ կը հանգու-
ցանեն խաչը, որոյ Գլակէն փախուստը
ծածուկ կը մնայ: Ներսէս կթղ. օր մը
նոյն սրբութիւնը տեսնելու կ'երթայ հօն,
և չի գտնու: Ի սուգ կը մտնեն հայրա-
պետն ու Վահան եօթն օր. և իշխանը
գիշեր մը քնոյ մէջ կը տեսնէ լուսաւոր
մարդ մը՝ որ կ'ըսէ. «Զիս կողոպտեցին
և զԱրջը շինեցին». և կը պատուիրէ հօն
թողուլ խաչը: Յաջորդ օրը կաթողիկոսին
հետ կ'երթայ ի Միծառն, գողը կը գըլ-
խատէ, գողակից կրօնաւորին աչքերն հա-
նել կու տայ: Արջուց իշխանէն 100,000
դահեկան տուգանք կը պահանջէ, և խաչը
կը յանձնէ գաւառի եպիսկոպոսին, որ եօթ
քահանայ կը կարգէ եկեղեցւոյն վրայ,
տարուէ տարի հսկելու անոր, և 6000
դրամ կու տայ Տարօնի: Այս ամէնը պատ-
մողն է Յովհանն Մամիկոնեան՝ նոյն դարէն:

և. Վարազայ խաչ. — Հոփսիմեանց
վարուց պատմիչը կ'աւանդէ՝ թէ նոյն
կուսանքն ի կորիթ կու գան, կուռքերը
կը փշրեն և թունաւոր օձերը կը սպան-
նեն «նշանաւ սուրբ խաչին» զոր իրենց
հետ ունէին: Ապա կ'իջնեն ի Տոսպ, նոյն
խաչը կը թողուն Վարազայ լեռան վրայ
«հանդէպ Վանի», ուր կը բնակին իրենք
եւս՝ թովմայի Արծրունւոյն երկրորդ շա-
րունակողը, որ կ'ապրէր ԺԳ դարուն,
կ'ըսէ՝ թէ Հոփսիմեանց այդ խաչն էր՝
որ կը կորնչի և ապա կը յայտնուի նոյն
լեռան վրայ՝ Յայտնութեանդ պատմու-
թիւնը գրած է Յովհաննէս քորեպիսկոպոս
է դարուն, որ սակայն չ'ափնարկեր բնաւ
Հոփսիմեանց կամ անոնց խաչին: Ե դա-
րուն՝ Ներսէս Շինողի օրով՝ կար, կ'ըսէ,
Վարազայ հայրը թողիկ, որ «առեալ

1. Պատմ. Տարածոյ, 54-56. — 2. Մ. Խորենացի.
Մատեն. 302. — 3. Թ. Արծր. 344-45.

զգիտութիւն վասն զալստեան սուրբ խա-
չին» (ուստի), տասն օր կը պահէ ու
կ'աղօթէ աշակերտին հետ: Եւ ահա յան-
կարծ ահաւոր ձայն մը կը լսուի, երկիրը
կը թնդայ, և լեռան կատարը կը տես-
նուին լուսափայլ հրեշտակաց երգեցիկ
խմբեր, որոց հետեւէն կ'երեւի խաչը՝ որ
կը ծածկէ լեռը լուսով, և զոր կը տես-
նէին բոլոր շրջաբնակները: Ապա հրեշ-
տակներն ու խաչ կ'երթան կը մտնեն
վանքին տաճարը, շարունակելով երգել
ժամեր, մինչեւ կը նուաղի լոյսը, կը
ծածկուին հոգեղէնք, և կը մնայ խաչը
միայն: Համբաւը կը տարածուի ընդ Հայս,
և կը սկսին ուխտագնացութիւնք՝ Այս
կը պատահի 751ին՝ ըստ կարծեցեալ
Շապուհ Բագրատունւոյ (36):

Ժ. դարուն Գագիկ Արծրունի անոր կը
շինէ «ոսկեգործ ականակապ» պահարան
մը, ս. նշանէն մաս մը տեսնելի թողով
անոր մէջ: Իսկ Աշոտ Ողորմածի համա-
նուն որդին անոր կը շինէ ականազարդ
ճոխագոյն պահարան մը, 30,000 արա-
բական ոսկի դահեկանով: Աշոտ Արծրու-
նի իւր վրայ կը կրէր պատերազմաց մէջ,
ագուցուած սաղաւարտին ներքեւ՝ նոյն
խաչէն մաս մը. և ընդհարմանց ժամանակ
անոր կ'ապաւինէր ու յաղթական կ'ենէր
միշտ: 1092 թուականին, կը տեղեկագրէ
Ուհայեյին, ս. նշանդ կը տարուի իւր
այդ քաղաքը, որ կը դրդի, և մեծ հան-
դիսով կը հանգուցանեն իրենց եկեղեցւոյն
մէջ, ուր կը մնայ քանի մը տարի. և ուստի
ապա գաւառի իշխանն անիրաւաբար կը
հանէ և իրեն կը սեփականէ: Վեց տարի
վերջ քաղաքին թորոս իշխանը նեղը մը-
տած Պաղտին կոմսին և Հայոց կոստան-
դին իշխանին յարձակմանէն, հաշտութեան
կու գայ, և նոյն սրբութեան վրայ կ'երդ-
մեցնէ զՊաղտին չֆեսաւ իրեն: Իսկ
1110ին Փրանկներ ու Հայք օգնութեան
կ'երթան Ուհայի. և Վարազայ նշանը
դնելով գեղարդան մը ծայրը, զօրաց առ-
ջեւէն կը տանէին:

Հայաստանեայց խաչանշխարաց մէջ
սա միակն է՝ որոյ յիշատակը մտած է

մեր տօնացուցին մէջ: Ս. Ղազարու զըր-
չագրերէն 1284ի աւետարանացոյցը դեռ
չունի զայն. 1287ի տօնացոյցը կը կարգէ
առաջին կիւրակէի մէջ՝ յետ փոխման Աս-
տուածածնի. իսկ 1438ի օրինակը Խաչ-
վերացէն երկու շաբաթ յետոյ, ինչպէս
կը կատարուի դեռ այսօր:

գ. Հոռոմայրի կշան. — Գուգարաց մէջ
կար Հոռոմայր կոչուած մենաստանը, ուր
կը պահուէր խաչի նշխար մը, բերուած
ու թողուած հօն յոյն իշխանի մը կող-
մանէ, ինչպէս լսած էր ու կը յիշէ աշ-
խարհագիրն Վարդան: Ըստ նոյն հեղի-
նակին՝ հրաշք մ'ալ կը գործուի «ի
հոչակաւոր սուրբ նշանէն». ի ծնէ կոյր
մանուկ մը կը տանին հօն, և աչաց վրայ
կը դնեն խաչը. իսկոյն աչքերէն առատ
արիւն կը հոսի, և տեսանելիքը կը նո-
րոգուին:

ե. Սեւանայ խաչ. — Նոյն մենաստանի
հօր Մաշտոցի աշակերտն Ստեփանոս կը
պատմէ՝ թէ Աշոտ իշխան, որ յետոյ հի-
մեց Բագրատունեաց գահը, նոյն հօր տե-
սութեան երթալով, կը շնորհէ անոր «ըզ-
լոյսն մշտնջենաւոր» զոր Յունաց Վասիլ
կայսրն յղած էր նոյն բարեպաշտ իշխա-
նին: Եւաւ կանգնեցաւ ծերունի վանա-
կանը, և արտասուօք ընդունելով «զսուրբ
խաչն» այն, դրաւ իւր աչաց վրայ և
համբուրեց: Այդ սրբութիւնը «պնդեալ էր
ոսկով և զարդարեալ գեղեցկագան գոր-
ծով, ընդելուզեալ մարգարտով»: Մաշտոց
զայն դրաւ նոյն մենաստանին մէջ, ուր
կը մնայ տակաւին մինչեւ այսօր:

1381ին Լենկթիմուրի արշաւանաց ժա-
մանակ՝ զարմանալի բաներ կը պատմուին
նոյն խաչի մասին՝ ջահկեցի Ղազարէն:
Սեւանայ առաջնորդն Յովհանն զայն իւր
մէջքին կը կապէ, և բռնաւորին աչքե-
րուն դիմաց կը սկսի ոտքով վազել լճին
վրայէն: Լենկթիմուր զարմացած, կը խնդրէ

1. Հյպտմ. 280-81. — 2. Թ. Արծր. 286. — 3. Մ.
Ուհ. Թ. — 4. Շապ. Բագր. 59, 61, 62. — 5. Մ.
Ուհ. ՃԼԵ, ՃԽԻ, ՄԴ. — 6. Խնճիճ. Ստոր. Հիմ
Հայաստ. 362. — 7. Հաւաք. պատմ. 129. — 8.
Գրչ. ԽԳ մաշտոց Ս. Ղազ.

առաջնորդէն յետ դառնալ, խոստանալով
կատարել անոր բոլոր խնդիրներն ու չմնա-
սել ուխտին: Կը դառնայ, ցոյց կու տայ
հրաշագործ նշանը, և կը խնդրէ՝ քրիս-
տոնեայ գերիներէն ազատել այնչափ հոգի՝
որչափ կրնային պարփակուիլ սահմանա-
փակ մենաստանին մէջ: Կը հաւանի բըռ-
նաւորը, և կը տեսնէ՝ որ բերաւոր գե-
րիներ կը գետեղուին վանքին մէջ: Ու-
զելով իմանալ այս հրաշքին պատճառը,
ինքն իսկ յեկեղեցին կը մտնէ, և կը տեսնէ՝
որ ներս մտնող գերիներն աղանձի կը դառ-
նային ու կը թռչէին դէպ ի Սեւան¹:
Գեղեցիկ երեւակայութիւն պատմչի՝ բնա-
կանապէս:

բ. Կամրջաձորայ եղան. — Ստ. Ասողիկ
կը պատմէ՝ թէ նոյն ուխտին առաջնորդն
Յովհաննէս՝ Եգերացոց գաւառէն իւր հետ
կը բերէ ի նոյն վանքն « զհրազէն նշանն
տէրունական » և ուստի որ կ'անցնէր՝
շատ հրաշքներ ու բժշկութիւնք կը կա-
տարուէին նոյն պատուական խաչին ձե-
ռամբ: Կը յարէ պատմիչը՝ թէ իւր ժա-
մանակ և իւր աչօք իսկ տեսեր է շատ
հրաշքներ և ախտաժեւաց բժշկութիւնք
(Գ, է): Աւելի ընդարձակ է անձանթի մը
տուած տեղեկութիւնն անոր մասին²: Այդ
ս. նշանը Ղունկիանոս հարիւրապետն իսկ
կ'առնու Պետրոսէ և կը բերէ ի Կապա-
դովկիա, ուր կը հրաշագործէ ու կը մնայ
մինչեւ ցամա 960, անցնելով ձեռքէ ձեռք
ու տեղէ տեղ. և որուն հուսկ տէր կը
դառնայ յիշեալն Յովհաննէս, որ Ռոմա-
նոս կայսեր բռնութենէն խոյս տալով իւր
միաբանից հետ, նոյն խաչով հանդերձ կու
գայ ի Հայս, Արշարունեաց գաւառը:
Աբաս արքայ սիրայօժար կ'ընդունի հիւ-
րերը, ընկած կ'երկրպագէ խաչին ու կը
համբուրէ արտասուօք: Իսկոյն կը շինեն
Կամրջաձորոյ վանքը, և նաւակատիք կը
կատարեն ս. նշանին, որ կը շարունակէ
հրաշագործել և ուխտաւորներ ընդունիլ:

1001 թուին կը սկսին յարձակումներ
և կոտորածք բարբարոսաց, որ կը ստի-
պեն վանականները ծածկել սրբութիւնքը
խաչին հետ հողին ներքեւ, ուր կը մնայ

177 տարի: Վանականք կը փախչին,
վանքը կ'ամայանայ, մինչեւ որ օր մը
Սամսամ անուն աշխարհի իւր բնակու-
թիւնը կը հաստատէ անոր մէջ: Գիւտ
խաչին տօնը կը հասնի. և երբ աշխարհ-
ւոյն կրնը գիշերը կը կարաւէր, խաչին
թաղման տեղւոյն վրայ կը տեսնեն իջած
լուսոյ սլան մը, որ կ'ապշեցնէ զիրենք:
Առաւօտուն տիկինը փորել կու տայ նոյն
վայրը, ուստի բոց և բոյր կ'եղնէ. կը
հասնեն վերջապէս ս. նշանը, և կը յան-
ձնեն Կիրակոս քահանային, որ ամիրա-
պետէն հրաման կ'առնու վերակազմելու
վանքը, և տէրունի նշխարը կը շարու-
նակէ մեծարուիլ ու նշանագործել հօն:

բ. Ապարանից խաչ. — Գր. Նարեկա-
ցին կ'աւանդէ՝ թէ Մովսէս Ստեփանոս
եպիսկոպոսի օրով Հայք կը խնդրեն Պոլ-
սոյ Վասիլ ու Կոստանդին կայսրերէն՝
հօն պահուած փրկչական խաչէն նշխար
մը: Եւ անոնք բարեացակամութեամբ
« կազմեցին և պատրաստեցին ոսկեկուռ
ձուլածոյ » խաչ մը. և անոր մէջ ազուցին
« մասն հատուածոյ ի կենսակիրն փայտէ,
տէրունեան փառացն բազմականէ »: Երբ
խաչն հասաւ ի Հայս, Արծրունեաց իշ-
խանք « մեծաւ հաւատով » հաւաքած իրենց
բոլոր ազատանին, անոր ընդ առաջ գը-
նացին, և չքնաղ հանդիսիւ, ջահերով ու
խնկով, « ի հնչումն երգոց, ի տաւիղ օր-
հնութեանց, ի ձայն ցնծութեան, ի ծափս
ձեռին, ի արօքումն կայթելոյ կարաւ-
ման ոտին » բերին ազուցին Ապարանից
եկեղեցւոյն մէջ. և սահմանեցին այնու-
հետեւ տօնախմբել միշտ այդ աւուր յի-
շատակը: Այս եղաւ 983 թուականին³:
Նոյն սրբութիւնն յետոյ կ'անցնի Աղթա-
մարայ ապստամբ աթոռին հիմնադիր Դաւ-
թի ձեռքը, ինչպէս կը պատմէ թովմայի
յաւելուածը (3 և 9):

ժ. Վանակոյայ խաչ. — ԺԱ. Ղարու վախ-
ճանին մօտերը, կը գրէ Վարդան, « սուրբ
խաչն Նունեայ » յԱնի կը մտնէ. այն՝ որ

1. Ազգգր. համդ. ԻԳ, 138-39. — 2. Ն. Աւեշ.
Այրրտ. 547-49. — 3. Նարեկ. Մատեն. 379-80, 387.

« յուրացմանն վազգենի վրաց առաջնոր-
դի » Ս. Սահակայ աշակերտներէն Ան-
դրէասի ձեռամբ կը փոխադրուի Պարխար
լեւան խորշերը: Հօն կը մնայ եօթ տարի.
և ապա հրամանաւ Մամիկոնեան Հմայե-
կայ որդւոյն Գրիգորի՝ կը տարուի Կա-
պոյտ բերդը, և անտի ի վանանդ, որոյ
անուամբ և կը կոչուի: Իսկ երբ Մամի-
կոնեանց տոհմը կը ջնջուի անօրէն Սուր-
մանէն, Բարսեղ արքեպիսկոպոսի օրով
յԱնի կը տարուի. և անոր տօն կը սահ-
մանուի Խաչվերացի տօնին ութօրէից յե-
տոյ: Յայտնի է՝ թէ պատմիչդ կը շփոթէ
Վարագայ խաչի տօնին հետ՝ զոր յիշե-
ցինք վերեւ:

ժա. Վանկոյ եղան. — Հոռմկլայի հայ-
րապետանոցին մէջ կը պահուէր ու կը
մեծարուէր սրբութիւնս, բնականապէս
բերուած վանկոյ ուխտէն, յայտնի է
երբ: Շնորհալին իւր թղթոց մէջ ողջոյն
կը յղէր « յաստուածընկալ սուրբ նշանէս
Վանկոյ »: Նոյն ինքն կ'իմացնէ՝ թէ Սա-
մստիոյ Խաչատուր եպիսկոպոսը ձեռնա-
դրեր է սոյն « կենսակիր խաչիւս »: Ն.
Լամբրոնացին Յայտնութեան գրոց մեկ-
նութիւնը թարգմանեց է ի Հոռմկլա՝ « Ընդ
հովանեաւ աստուածընկալ նշանին վան-
կոյ » և այլ սրբութեանց: Ռօսլին 1256ին
կ'իմացնէ՝ թէ Հոռմկլայի եկեղեցւոյն մէջ
կար ուրոյն « տաճար » կամ մատուռն
« աստուածընկալ սուրբ և յաղթող նշա-
նին վանգոյ »: Ըստ թովմայի, թղթոց
գրոց զաղափարողին, 1292ին երբ Հոռմ-
կլա գրաւուեցաւ Եգիպտոսի սուլտանէն,
միւս սրբութեանց հետ գերի տարուեցաւ
« և հուշակաւոր նշանն սուրբ Վանկոյի »
(537). և զոր յաջորդ տարին Հեթում Բ
գնելով՝ կը բերէ ի Սիւս, ուր և կը մնայ
այնուհետեւ. այնպէս որ Մեսրոբ կթղ-
1364ին առ Լեհասայս թղթին մէջ, և
Թէոդորոս 1384ին ու Յակոբ Գ 1410ին
ողջոյն կը յղեն նոյն սրբութեանէն⁴: Յետ
հայրապետական աթոռոյն բաժանման՝ նոյն
նշանը կը մնայ ի Սիւս. այնպէս որ Կարա-
պետ կթղ. ԺԵ Ղարու կիսուն մօտերը կը
բնակէր նոյն քաղաքին հարաւային կողմը՝

տէր Պողոսի ուխտին մէջ, « Ընդ հովա-
նեաւ Վանկոյ սուրբ նշանիս »:

ժա. Տարեւոյ եղան. — Սիւնեաց այդ
անուանի եպիսկոպոսանոցին մէջ կը պա-
հէին, կ'ըսէ իրենց պատմիչը, « զաստուա-
ծամուխ սուրբ նշանն » որ էր ի կենարար
փայտէն, բերուած յունական աշխար-
հէն և ընծայուած Սիւնեաց առաջնորդաց՝
« ի պահպանութիւն վիճակեցոցս սոցա
առաջին իշխանաց »: Հօն կը պահէին նաև
« զաստուածընկալ խաչն բարգենեան »,
զոր շինած էր Անդովկայ թողը Վասակ,
արծաթեայ՝ մարդաչափ, և « ունէր յին-
քեան մասն ի փրկչական փայտէն »:

881ին՝ նոյն գաւառին եպիսկոպոսը
Սողոմոն ձեռք կը ձգէ ուրիշ « մասն ինչ
յաստուածաբարձ խաչէն », որ իւր վրայ
կը կրէր « նիշ ներկուածի արեամբն Յի-
սուսի », և մեծամեծ հրաշքներ կը գործէր.
շինել կու տայ ոսկեղէն խաչ մը մեծար-
հետ ճարտարաց, զոհարներով կը պնէ,
և անոր մէջ կը դնէ սրբութիւնը, զոր կը
նուիրէ նոյն եկեղեցւոյն⁵:

ժբ. Այդարիպի խաչ. — Այդ անուամբ
ծանօթ մարգարան Անույ Ս. Փրկչին մէջ
արձանագիր մ'ունի, որով կ'իմացնէ՝ թէ
1035 թուին Սմբատ շահնշահէն հրովար-
տակ մ'առնելով, կ'երթայ առ Միքայէլ
կայսր ի Կոստանդնուպոլիս. և « շատ ջա-
նիւ և մեծածախ գանձիւ » կը յաջողի
ստանալ « մասն ի սրբոյ խաչէն ». կը
դառնայ, կ'աւարտէ իւր դաստակերտ նոյն
եկեղեցին, « և զնշանն յուսոյ կանգնեցի,
կ'ըսէ, ի պսակ հարսինս Քրիստոսի ».
միանգամայն հոգեւոր պարտականութիւն-
ներ կը դնէ եկեղեցւոյն սպասաւորաց վրայ՝
ի նպաստ իւր հոգւոյն⁶:

ժգ. Խոտակերպ եղան. — Խաչի, որդի
Հասանայ Հաղրակեանց, ունի պահարան
մ'արծաթեայ՝ ոսկեգօծ, բազմադրուագ,

1. Հաւաք. պտմ. 111. — 2. Նամակամի, 279, 30,
212, 238. — 3. Անդ. 213. — 4. Նյույ. 428. — 5.
Ազգր. համդ. 1913. Բ. 1, էջ 66, 68. — 6. Սմբատ,
126. — 7. Կամեմից. 6, 218, 221. — 8. Նյույ. 575.
— 9. Ստ. Օրբել. 148. — 10. Նոյն. 156-57. —
11. Շիրակ. 82.

քառակուսի, երկրացիկ դռներով, (այժմ էջմիածնի մէջ), զոր ինքն իսկ շինել տուած էր 1300ին, և անոր մէջ ագուցներ ս. խաչի նշխար մը: Տիրեցի, կը գրէ նոյն պահարանին մէջ, հայրենի երկրիս և ուրիշ շատ գաւառաց, «զօրաւիգն և օգնական ունելով զՔրիստոս և զսուրբ նշանս խոտակերաց, որով և նախնիքն իմ զօրացան»¹: Եւր և ինչպէս զօրացան, չենք գիտեր, յատկապէս յիշուած չլինելով խաչդ անոնց յիշատակարանաց մէջ:

Ժդ. Դիւնայ խաչ. — Արցախէն բերուած էր, կը գրէ Սիւնեաց պատմիչը, որ ունէր «նիշ արեան ներկեալ յաստուածային կողիցն հոսմանէ», և որ զարմանալի հրաշքներ կը գործէր: Անոր ծագման մասին լսեր էր՝ թէ անծանօթ ճգնաւոր մը զայն պահած մախաղին մէջ, կը շրջէր «ի պատճառս աղօթից»: Կը հանդիպի Դիւնայ գիւղը, և կ'իջեանի երկցուն տունը: Նոյն գիշերն անոր մէկ մանուկը կը մեռնի, և մայրը ճգնաւորին մախաղն անոր քով դնելուն՝ յանկարծ կը յառնէ մեռեալը: Տեսնելով ընտանեաց հիացումը, կասկածոտ կրօնաւորն իսկոյն կ'առնու մախաղն ու խոյս կու տայ: Լուրը կը տարածուի գիւղին մէջ, և Դիւնայ իշխանը ծառաներով անոր ետեւէն կը վազէ: Երբ կը տեսնէ թէ պիտի բռնուի, խաչին նըշխարը կը ծածկէ կնքողն կրկնուածին մէջ, և անոր պահարանը կը նետէ սալորի թփի մը մէջ: Հետամուտք հօն հասնելով, կը տեսնեն՝ Յայտնութեան օրով ու ձեան մէջ՝ թուփը զարդարուած տերեւներով և անուշաբույր ծաղիկօք: Կը վերցնեն պահարանիկը, և տեսնելով որ թափուր էր, կ'ընթանան կը հասնին ճգնաւորին՝ Աղունոյ գետին քով: Նա զայրացած, նշխարը գետը կը նետէ, և մինչ անոնք զայն կը փնտռեն կրօնաւորին հանգրծից մէջ ու չեն գտներ, կը տեսնեն որ ջուրը ճեղքուեր էր, և անոր միջէն խաչը բոց և անուշահոտ ծուխ կ'արձակէր: Կ'առնուն կը տանին Դիւնայ տունը, զոր առ վշտին կ'անիծէ ճգնաւորը: Նշխարը կը մնայ հօն այնուհետեւ ու կը պատուուի:

Բարեպաշտ իշխանը Ջալալ անոր եկեղեցի մը կը կառուցանէ Գիշերածոր անուամբ, կը շինէ արծաթեայ պահարան մ'ալ, և հօն կը գետնից: Գաւառին տեարը յետոյ կարօտութեան կը մատնուին հարստահարչաց երեսէն, և կը վաճառեն սրբութիւնը Սիւնեաց եպիսկոպոսին, որ էր նոյն ինքն պատմիչն Ստեփանոս, 5000 դրամի և ուրիշ փոխարինաց: Եւ նա կը շինէ նոր պահարան մը, խաչածեւ, ընտիր ոսկով. պատուանդանին վրայ գահարագարդ ոսկի խնձորով մը, յորում քանդակուած էին քառակերպեան կենդանիք. զայն կը դնէ ոսկի և արծաթ մեծ պահարանի մը մէջ՝ երկրացիկ դռներով, և կը հանգուցանէ Նորավանից եկեղեցւոյն մէջ²:

Ճե. Ամրայ նշան. — Մկրտիչ եպս. Նաղաշ 1447ին կ'երթայ ի Թէոդոսիա, և անտի կը բերէ «գհրաշալի չքնաղազարդ զպատուական սուրբ նշանն Քրիստոսի», որ իւր մէջ ունէր «ի խաչափայտէն Քրիստոսի»: Խաչին բունն ականազարդ էր, և կեղրոնն ունէր զՅիսուս բեւեռեալ «յոսկւոյ ձուլածոյ»: Ջայս շնորհած էր Հռոմայ պապը՝ կաթայեցի Սարգիս վարդապետին, եղբ Փլորենտիոյ ժողովին նըւիրակ գնացած էր Կոստանդին կաթողիկոսին կողմանէ՝ եկեղեցեաց միութեան խնդրով: Եւ Սարգիս «ընդ բազում մեծարանացն և պատուոյն» կ'ընծայէ զայն Նաղաշի, որ մեծ ուրախութեամբ կը բերէ յիւր աթոռն Ամիթ, և կը դնէ իւր կառուցած եկեղեցւոյն մէջ: Սրբութիւնը կը հասնի վարագայ նշանի յիշատակին օրը, զոր մեծ հանդիսիւ կը տօնախմբեն, և կը սահմանեն՝ ամէն տարի նոյն օրը շքեղութեամբ մեծարել յիշեալ սրբութիւնը³:

Ժգ. Կան նաեւ ուրիշ նշխարներ՝ պատահաբար յիշատակուած: Այսպէս Դերէն Արծրունի երբ կը վախճանի Ժ դարուն, կը տանին ի հանգիստ Ճրպայ վանուց մէջ՝ «ուր նշան սուրբ խաչին էր», և որոյ

1. Գեղարուեստ, 1911, 38. - 2. Ս. Օրբել. 354-58. - 3. Հայտմ. 574. - 4. Եպ. 71.

համար իսկ կը թաղուի հօն: - 1214ին Սրբահամ վրդ. կը նուիրէ Սանահնի Աստուածածնին «զիմ զթագաւորական և զտէրունական սուրբ նշանս մեծածախ պահարանով»: - Հոնեց Տիգրան 1215ին Անուոյ մէջ կը շինէ Ս. Գրիգոր վանքն ու եկեղեցին, զարդարելով զայն նաեւ «մասամբ աստուածնկալ և տէրունական խաչին»: - Սմբատ Օրբելեան Նորավանից եկեղեցւոյն մէջ պահուած «աւագ սուրբ նշանին» շինել կու տայ «պահարան յոսկւոյ՝ ի կերպ աղիւսակի», երկրացիկ դռներով: - 1267ին Սանահնի վանական Մխիթար յօրինել կու տայ «զպահարանս երկուց սուրբ նշանաց»⁴: - 1273ին Հաղբատայ առաջնորդն Յովհաննէս՝ «ետու կազմել, կը գրէ, զմեծածախ պահարանն Ողորմոսի Ս. նշանին»⁵: - Նոյն ինքն 1281ին եւս շինել կու տայ Սանահնի մէջ «զմեծածախ պահարանն աւագ սուրբ նշանին»⁶:

2. ԱՅԼ ՆՇԽԱՐԱՆԵՐ ԵՒ, կապուած միշտ փրկագործութեան խորհրդոյն հետ, ցոյց կու տան իրենց ստոյգ կամ ստուգելի գոյութիւնն ի Հայս: Այսպէս խաչիկ Ա. կաթողիկոսի 976ի կոնդակէն կը տեղեկանանք՝ որ Մաղարդայ ուխտի եկեղեցւոյն մէջ կային «սեւեռեալ շեւեռեալ բազկացն Յիսուսի», և անոր հետ «յարբալ յալան թագից փուշ պսակին ճիւղ մի»⁷: Նմանապէս Յովհաննավանից մէջ կը պահուէր «մասն ինչ ի փուշ պսակէն Քրիստոսի», զոր թուրքերն ժե դարու սկիզբն իրենց ասպատակութեան պահուն կորուսին, կ'ըսէ Առաքել (59):

Մի և նոյն վախճանին կը վիճակի նաեւ «վարչամակ երեսուցն Քրիստոսի», այն՝ որ գերեզմանին մէջ կը ծածկէր իւր զըլուխը. և որ կը մեծարուէր նոյն մենաստանին մէջ (անդ):

Գր. Նարեկացին կը գրէ՝ թէ Ապարանից խաչին հետ, զոր տեսանք վերեւ, Բիւզանդիոնէն բերած էին նաեւ «զքնալին վկայս կեցուցիչ մահու վշտացն Յիսուսի», որ էին՝ ծննդեան խաւճարաբարձի վերնատան սփածանելին, ծաղրական ծի-

րակին, փշեղեկ պսակը, շեւեռ՝ որով խաչին գամուեցաւ, և սպունգը՝ որով քացախն արբուցին: Իմանալու ենք աղոնցմէ մասեր, ոչ ամբողջութիւնը, զորս ամէնն «ընդ խաչին հիւսեալ միատարրեցին», կամ պրկեցին մէկ հիւսուածի մէջ⁸:

Աւանդութիւնը կ'ուզէ, և Երուսաղեմի միաբան կրպ. սրկ. Մկրտիչեան 1851ին կը կրկնէ, թէ Հայաստանի քաղաքական վրդովմանց ժամանակ Ապարանից բնակիչք առեր են այդ սրբազան ծրարը, և գնացեր հաստատուելը Անուոյ բերդին քով. անտի անցեր են ի Պոլիս և ապա ի Ռոդոստոյ, ուր ես ինքս 1906ին տեսայ զայն՝ Ս. Թագաւոր եկեղեցւոյն մէջ: Արծաթեայ խաչի մը վրայ ագուցուած նոյնպէս արծաթեայ կոնածեւ պատեան մը, և սա ձածկուած մարգարտահիւս անկուածով մը: Իսկ ստորոտէն կը կարկառէր բեւեռին ծայրը:

Ինձ ծանօթ վերջին սրբութիւնը կը կազմէ զեղարկ՝ որով խոցուեցաւ Յիսուս: Վանական վրդ. (ԺԳ դարուն) փափաքեցաւ՝ որ Թագոս առաքեալ զայն բերած լինի Հայս: Փափաքեցաւ կ'ըսեմ, զի այդ զնքն ըստ արտաքին հին ու բազմաթիւ վկայութեանց՝ 2-ժԱ դարերուն կը պահուէր Երուսաղեմի մէջ. և ժԱ ին վերջերը տարուեցաւ ի Պոլիս, ուր մնաց ու կը յիշուի ամբողջ ԺԳ դարուն, և ուր գիտէր նաեւ մերս Մո. Ուռհայեցին 1136ին, և Կիրակոս 1256ին: Դժուարաւ կրնային Յոյնք զայն մեզ շնորհել: Յամենայն դէպս այդ ժամանակամիջոցին իսկ կ'երեւի ի Հայս անոր նմանութիւն մը, յիշուած վարդանէն (111), որուն Պոռ իշխան 1268ին պահարան մ'ալ կը շինէ և կը պարգեւէ Այրիվանից, ինչպէս կ'իմանանք յիշատակարանէն. իսկ այսօր կը պահուի էջմիածնի մէջ⁹:

1. Ջալալ. Ա. 33. - 2. Շիրակ, 75. - 3. Ս. Օրբել. 304. - 4. Գր. Թ. 110 Ս. Ղար. - 5. Անդ. 6. Անդ. - 7. Միսակաթ, 516. - 8. Նարեկ. Մատեն. 380, 389. - 9. Գր. Թղթոց. 533. - 10. Ս. վ. Ա. 3. զատկերացոյց հաւաք. Ա. 9.

Այսպէս գիտցաւ մեծարել մեր հարց սիրտը, միտքը, երեւակայութիւնն ու քը-
բարեպաշտութիւնն Ֆիսուսի նշանը, որ նալն ի սպաս դրաւ անոր. պատմեց,
իրենց տանջուած գոյութեան խորհրդա- վիպեց, նուիրեց անոր զգայուն և խոր-
նշանն և պահապանն էր միանգամայն, իմաստ երգեր, աղերսելով միշտ Փրկչին.
մեծ խնամով հաւաքելով անոր և յարա- « Խաչ քո եղիցի մեզ ապաւէն » այս
կից սուրբ գործեաց նշխարները : Իւր տառապանաց աշխարհին մէջ :

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

“ ՀԱՐԱՆԻՔ ԵՆՁ ”

Յովն. Ժ. 11

Կը հաւատամ քեզի անհուն տենչանքով
Ո՛վ սուրբ բարբառ կենդանի.

Դուն ինձ բացիր լոյսի ճամբան անվրդով
Սրբութեան մէջ հաւատքի :

Աստուած էիր, և նոյն հողով սահմանուած
Կարօտ մըտքիս՝ տեսութեան.

Երկինքներէն, մըրրիկներէն անջատուած
Ձայնըդ նոյնն է յաւիտեան :

Կ'անցնին դարեր — և յորձանուտ ամբոխներ
Հորիզոնէ հորիզոն.

Դու միայն կաս տիեզերքի ազատ տէր
Անժամանակ, անշարժուն :

Քեզ փընտռեցի երկընքի մէջ, ծովուն մօտ
Աւետարանըդ ձեռքիս,

Յայտնուեցար զերդ նորածագ առաւօտ
Հազար կողմէն աշխարհքիս :

Մի՛ հարցնեմ, կը հաւատամ սըրտագին
Խորհուրդներուդ ծընրադիր.

Տըժգոհ էիր կարծես փառքով երկընքին
Հող ու մարմին սիրեցիր :

Կը հաւատամ որ այդ զըձուձ ձորձին տակ
Աստուած մը կայ մարդացած.

Որ լոյսէն լոյս, և աղբիւրէն անապակ
Ձըւարթ ծագումն է առած :

Կը հաւատամ թաքոր լերան տեսիլքին
Ու ձիթենեաց ողբերուն.

Կը հաւատամ յաւերժական հըրաշքին
Քրիստոսական դարերուն :

« Հաւատա՛յք ինձ », կը հարցընես զըթաւիր
Քու ձեռքերուդ շինածին.

Կոյրերուն լոյս, ու մեռածին կեանք տըւիր
Ի՛նչպէս հետեւի քու Եսին :

Ինչո՞ւ սակայն խօսքերուդ մէջ թախիժ կայ,
Ինչո՞ւ խըռովք հոգեկան.

Նոյն սիրտն է որ իմ կուրծքիս տակ կը զոփայ
Անապահով փըրկութեան :

Նոր մըրրիկներ զիս կը վարեն ծովէ ծով
Լըքուած բախտին և անյոյս.

Քեզ ընտրեցի կեանքիս խարխիսն ապահով
Իմ լոյս, իմ լոյս, ո՛վ Յիսուս :

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ



ՍՕՆԱԹ ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ

ԿԱՆԱՅԻ ՄԷՋ ՀԱՐՍՆԻՔ ԷՐ

Կանայի մէջ

Ի Գալիլեա

Հարսանիք էր հրաշքի սիրով

Հարսը տրտում

Տրտում անոյշ աղջիկ մըն էր

Ու դողահար լոյսերու մէջ դէմքին վըրայ
Չեռքերուն վրայ որ շղթայուած էին սրտին
Այնքան հազիւ տեսանելի այնքան աղուոր

Ստուեր մը կար

Կարծես երկար թարթիչներու ծայրէն զըծուած

Կարծես երկար ու լուսաշող փետուրներու

Ոնիրական թռչուններու թեւէն ինկած

Կանայի մէջ

Ի Գալիլեա

Երկու ձեռքեր իրենց գիծերն էին խառնած

Երգումի շունչ մը կը հասնէր

Աստղերուն մէջ

Հարսանիք էր հրաշքի սիրով

Եւ տունն ամբողջ կը բարախէր սրտի մը պէս

Գինով ու մռայլ

Հարսնիքին տունը ձայներու պարտէզ մըն էր

Նւագներու տաւիղներու պարտէզ մըն էր

Չեռքերը ծափ կը զարնէին և շրթներու

Ծիծաղին մէջ

Արդէն գիշերն արշալոյսին առագաստուած

Իր աստղերուն արծաթէ մրափը կ'անձրեւէր

Հարսանիք էր ի Գալիլեա

Կը սպասէին որ Դուն գայիր

Կը սպասէին որ տունին մէջ ձայնըդ հնչէր.

Ու մատներուդ հրաշքը բացուէր լոյսերու մէջ

Եւ քու անձիդ անհուն երկինքն երկրին վըրայ

Գարունը ըլլար ու բուրվառէր

Կը սպասէին որ Դուն գայիր

Որովհետեւ

Ատեն մը կար

Ժամանակին սլաքը կարծես կանգ էր առած

Կէտի մը վրայ